



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի  
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք  
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

ՈՐՈՇՈՒՄ

«15» ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 23

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ, 17-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է






Հաստատել Արգել համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի արտահերթ թիվ 5 նիստի օրակարգը

1. Արգել համայնքի 2020թվականի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու մասին
2. Արգել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 65-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
3. Արգել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության 0.00302հա հողամասը առկա շինություններով ուղղակի վաճառքով կառույց իրականացրած անձին օտարելու մասին
4. Արգել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության 0.02502 հա հողամասը քաղաքացի Կորյուն Նորայրի Այվազյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին

Կողմ -6

Դեմ-0

Ձեռնպահ-0

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
 ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ  
 ԱԲՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԼԱԴԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ  
 ՍԱՄՎԵԼ ՄԵԼԻՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ





ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի  
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք  
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

ՈՐՈՇՈՒՄ

«15» ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 24

ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և  
«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի







համայնքի ավագանին որոշում է

Ի գիտություն ընդունել Արգել համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի  
ընթացքի մասին հաղորդումը համաձայն N 1, 2, 3, 4, 5 հավելվածների :

Կողմ -6

Դեմ-0

Չեղնապահ-0

 ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
 ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ  
 ԱԲՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԼԱՂԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ  
 ՄԱՍՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ





ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի  
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք  
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

ՈՐՈՇՈՒՄ

«15» ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԳԱՆԻ N 25-Ն

ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԳԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 65-Ն

ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջի

համայնքի ավագանին որոշում է





Արգել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի « ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԳԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 65-Ն որոշման հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

- 1) 7-րդ կետի « համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար » բառերը փոխարինել «համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար » բառերով
- 2) 7-րդ կետի « 2)» ենթակետի «ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար» բառերը փոխարինել «օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար » բառերով:

Կողմ -6

Դեմ-0

Ձեռնպահ-0

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի  
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք  
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

ՈՐՈՇՈՒՄ

«15» ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 26

ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
0.003022Ա ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԿԱ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՅՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին»  
օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006  
թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33 –րդ կետի գ) ենթակետի պահանջի, հիմք ընդունելով կառույցն  
իրականացրած անձի Սուսաննա Ռաֆիկի Թաղևոսյանի դիմումը







համայնքի ավագանին որոշում է

1. Արգել համայնքի սեփականություն հանդիսացող / սեփականության վկայական թիվ 17032020-07-0001 գաղտնաբառ HQY5J47Y9L24 /1-ին փողոց թիվ 29/2 հասցեում գտնվող 0.00302 հա բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը /կադաստրային ծածկագիր 07-014-0012-0061/ 88788 /ութսունուր հազար յոթ հարյուր ութսունուր / դրամ արժեքով, հողամասի վրա առկա 30.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը / կադաստրային ծածկագիր 07-014-0012-0061-001/ 63420 / վաթսուներեք հազար չորս հարյուր քսան / դրամ արժեքով գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած անձ Սուսաննա Ռաֆիկի Թաղևոսյանին:
2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սուսաննա Թաղևոսյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուսաննա Թաղևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -6

Դեմ-0

Չենկապահ-0

 ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
 ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ  
 ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԼԱԴԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ  
 ՄԱՍՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի  
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք  
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

ՈՐՈՇՈՒՄ

«15» ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 27

ԱՐԳԵԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
0.02502 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՅԻ ԿՈՐՅՈՒՆ ՆՈՐԱՅՐԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ  
ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին»  
օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016  
թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերի, հաշվի առնելով Կորյուն  
Նորայրի Այվազյանի դիմումը







համայնքի ավագանին որոշում է

1. Կորյուն Նորայրի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ թիվ  
2823144 սեփականության վկայական տրված 19.08.2011 թվականին) Արգել համայնքի  
վարչական տարածքում՝ 22-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 4 հասցեում գտնվող , 07-014-  
0133-0003 հողակադաստրային ծածկագրով 0.154 բնակավայրի նշանակության բնակելի  
կառուցապատման հողամասին կից Արգել համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝  
2020 թվականի մարտի 13-ի թիվ 13032020-07-0064 սեփականության վկայական ),  
կադաստրային ծածկագիր՝ 07-014-0552-0002, 0.02502 հա մակերեսով բնակավայրի  
նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության  
իրավունքով, ընդլայնման նպատակով, հողի կադաստրային արժեքով, ուղղակի վճարումը  
735588 /յոթ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր ութսունութ / դրամ արժեքով  
օտարել քաղաքացի Կորյուն Նորայրի Այվազյանին :
2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական  
ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը  
կատարվում է Նորայր Այվազյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորայր Այվազյանի որոշման ընդունման մասին  
իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -6

Դեմ-0

Չեղնակահ-0

 ԱՇՈՏ ԱԼԵԲՍԱՆՅԱՆ  
 ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ  
 ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
 ԼԱԴԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ  
 ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ